ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Մատթեոս Ե.14–16**

Թող ձեր լույսն այնպես շողա:

**Ենթատեքստ**

Լեռան քարոզում Հիսուս Քրիստոսն ուսուցանեց Իր աշակերտներին այն մասին, թե ավետարանով ապրելն ինչպես է ազդում ուրիշների վրա:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Ավետարանով ապրելու ինչ որ մեկի օրինակը կարող է խրախուսել մյուսներին ավելի մոտենալ Աստծուն:

**Կիրառում**

Ե՞րբ է որևէ մեկի օրինակը ոգեշնչել ձեզ ապրել ավետարանով: Ինչպե՞ս կարող եք օրինակ լինել մյուսների համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Մատթեոս ԺԱ.28–30**

Եկեք ինձ մոտ:

**Ենթատեքստ**

Երբ որոշ մարդիկ մերժեցին Հիսուսին, Նա խոստումներ տվեց նրանց, ովքեր կընդունեին Իրեն:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եթե մենք գանք դեպի Հիսուս Քրիստոս, Նա կթեթևացնի մեր բեռները:

**Կիրառում**

Ե՞րբ է Տերն օգնել ձեզ, երբ ձեր բեռը ծանր է եղել: Ինչպե՞ս կարող եք ավելի մոտենալ Նրան:

Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս հատվածը քաջալերելու համար որևէ ընկերոջ կամ ընտանիքի անդամի, ով իրեն բեռնավորված է զգում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Մատթեոս ԺԶ.15–19**

Արքայության բանալիները

**Ենթատեքստ**

Փիլիպպեայում ՝ Կեսարիա, Հիսուս Քրիստոսն ուսուցանեց Իր աշակերտներին այն մասին, թե ինչ էր անհրաժեշտ Եկեղեցին ղեկավարելու համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կառուցված է Աստծո հայտնության վրա:

Նրանք ովքեր կրում են բանալիները իշխանություն ունեն կառավարելու Աստծո արքայությունը երկրի վրա:

**Կիրառում**

Ի՞նչ հավերժական ճշմարտություններ են հայտնի դարձվել ձեզ:

Ի՞նչ ուղիներով են Եկեղեցու ղեկավարները օրհնել ձեր կյանքը քահանայության բանալիներով: Ի՞նչ պետք է անեք դուք ցույց տալու, որ հաստատում եք Եկեղեցու ղեկավարներին, ովքեր կրում են քահանայության բանալիները:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Մատթեոս ԻԲ.36–39**

Սիրեք Տիրոջը, սիրեք ձեր մերձավորին:

**Ենթատեքստ**

Հիսուս Քրիստոսը պատասխանեց մի Փարիսեցու, ով հարցրեց թե որ պատվիրանն է ամենամեծը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Երկու մեծագույն պատվիրաններն են սիրել Աստծուն և սիրել մեր մերձավորին:

**Կիրառում**

Ինչպե՞ս կարող եք սեր ցույց տալ Աստծո հանդեպ ձեր սրտով, հոգով և մտքով: Ինչպե՞ս կարող եք ցույց տալ սեր Նրա զավակների հանդեպ:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Մատթեոս ԻԸ.19–20**

Ուսուցանեք և մկրտեք բոլոր ազգերին:

**Ենթատեքստ**

Իր հարությունից հետո Հիսուս Քրիստոսը հրահանգներ տվեց Իր աշակերտներին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, մենք պետք է ուսուցանենք և մկրտենք բոլոր ազգերին:

**Կիրառում**

Ի՞նչ կարող եք անել դուք օգնելու համար ինչ որ մեկին սովորել ավետարանը կամ պահել իր մկրտության ուխտը:

Ի՞նչ կարող եք անել նախապատրաստվելու համար միսիա ծառայելուն:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Ղուկաս ԻԴ.36–39**

Հարություն առած մարմինը ունի միս և ոսկորներ:

**Ենթատեքստ**

Իր Հարության օրը Հիսուս Քրիստոսը հայտնվեց Իր աշակերտներին Երուսաղեմում և ցույց տվեց նրանց Իր հարություն առած մարմինը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հիսուս Քրիստոսը հարություն առած էակ է: Հարություն առած մարմինը մսից և ոսկորներից մարմին է:

**Կիրառում**

Ինչպե՞ս է զորանում ձեր վկայությունը, երբ իմանում եք, որ Հիսուս Քրիստոսը տառացիորեն հարություն է առել:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Հովհաննես Գ.5**

Ծնված ջրից և Հոգուց

**Ենթատեքստ**

Նիկոդեմոս անունով մի Փարիսեցի հարցրեց Հիսուս Քրիստոսին, թե ինչ Նա ի նկատի ուներ, «նորից ծնվել» ասելով:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մկրտությունը և Սուրբ Հոգին ստանալն անհրաժեշտ արարողություններ են հոգևոր վերծննդի և սելեստիալ արքայություն վերադառնալու համար:

**Կիրառում**

Ինչպե՞ս է ձեր մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը ստանալը փոխել ձեր կյանքը: Ի՞նչ կարող եք անել ձեր մկրտության ուխտը պահելու և Սուրբ Հոգու ընկերակցությունը որոնելու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Հովհաննես ԺԴ.6**

Ուղին, ճշմարտությունը և կյանքը

**Ենթատեքստ**

Վերջին Ընթրիքի ժամանակ Հիսուս Քրիստոսը պատասխանեց Թովմասի հարցին, թե ինչպես աշակերտները կարող էին իմանալ դեպի Հայրը տանող ուղին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հավերժական կյանք ստանալու և Երկնային Հոր հետ ապրելու միակ ուղին Հիսուս Քրիստոսի միջոցով է:

**Կիրառում**

Ի՞նչ եք անում Հիսուս Քրիստոսին ապավինելու համար, երբ ձգտում եք գալ դեպի Հայրը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Հովհաննես ԺԴ.15**

Եթե դուք սիրում եք ինձ, պահեք իմ պատվիրանները:

**Ենթատեքստ**

Վերջին Ընթրիքի ժամանակ Հիսուս Քրիստոսն ուսուցանեց Իր աշակերտներին, թե ինչպես նրանք կարող էին ցույց տալ իրենց սերը Իր հանդեպ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մենք ցույց ենք տալիս սեր Տիրոջ հանդեպ, պահելով Նրա պատվիրանները:

**Կիրառում**

Նպատակ դրեք ձեր կյանքի որևէ ոլորտում, որտեղ դու կկարողանաք ցույց տալ ավելի մեծ սեր Տիրոջ հանդեպ՝ աճող հնազանդության միջոցով:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Հովհաննես ԺԷ.3**

Աստծուն և Հիսուս Քրիստոսին ճանաչելը հավերժական կյանք է:

**Ենթատեքստ**

Իր Խաչելությանը նախորդող գիշերը Հիսուս Քրիստոսն աղոթեց Իր հետևորդների համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Երբ մենք սկսում ենք իսկապես ճանաչել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք ձեռք բերել հավերժակաբ կյանք:

**Կիրառում**

Ի՞նչ կարող եք անել Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին ավելի լավ ճանաչելու համար: Ի՞նչ կարող եք անել Նրա հետ ձեր հարաբերությունները ամրացնելու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Գործք Բ.36–38**

Ապաշխարեք, մկրտվեք և ստացեք Սուրբ Հոգին:

**Ենթատեքստ**

Հիսուս Քրիստոսի Հարությունից հիսուն օր անց Պողոս Առաքյալն ուսուցանեց բազմությանը Երուսաղեմում, թե ինչ պետք է անեն փրկվելու համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Ապաշխարությունը և մկրտությունը մեղքերի թողության համար պատրաստում են մեզ Սուրբ Հոգու պարգևը ստանալուն:

**Կիրառում**

Ինչպե՞ս կարող ենք օգտագործել այս սուրբ գրությունը օգնելու համար որևէ ընկերոջ հասկանալ, թե ինչ պետք է մեզանից յուրաքանչյուրն անի մեր մեղքերից ներվելու և Սուրբ Հոգին ստանալու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Գործք Գ.19–21**

Վերահաստատման ժամանակներ

**Ենթատեքստ**

Երուսաղեմում Պողոս Առաքյալը վկայեց բազմությանը մեր օրերի մասին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մարգարեները բոլոր դարերում կանխագուշակել են վերջին օրերի վերահաստատաման (վերականգման) մասին:

**Կիրառում**

Ի՞նչ լրացուցիչ սուրբ գրություններ են ցույց տալիս, որ Տերը վերականգնելու է ավետարանը նախքան Իր Երկրորդ Գալուստը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Ա Կորնթացիս Զ.19–20**

Ձեր մարմինը տաճար է:

**Ենթատեքստ**

Կորնթացի Եկեղեցու անդամներին ուղղված մի նամակում Պողոս Առաքյալն ուսուցանում է Սրբերին այն մասին, թե ինչու են սեռական մեղքերն այդքան լուրջ:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Մեր մարմինները սրբազան են տաճարների նման և պետք է մաքուր և սուրբ լինեն:

**Կիրառում**

Ինչպե՞ս է այս սուրբ գրության վարդապետությունն օգնում պատասխանել համեստության վերաբերյալ հարցերին: Մաքրաբարոյությո՞ւն: Դաջվածքնե՞ր և դակումնե՞ր: Իմաստության Խո՞սքը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Ա Կորնթացիս ԺԵ.20–22**

Քրիստոսով բոլորը պետք է հարություն առնեն:

**Ենթատեքստ**

Երբ որոշ Սրբեր Կորնթոսում ուսուցանեցին, որ մեռելների հարություն չկա, Պողոս Առաքյալը գրեց նրանց՝ ուղղելու համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Քանի որ Հիսուս Քրիստոսը հաղթեց մահին և հարություն առավ, ողջ մարդկությունը ևս հարություն կառնի:

**Կիրառում**

Կիսվեք Հիսուս Քրիստոսի Հարության վերաբերյալ ձեր վկայությամբ: Ինչպե՞ս է այս վարդապետությունը հանգստություն տվել ինչ որ մեկին, ով կորցրել է իր սիրելիներից մեկին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Ա Կորնթացիս ԺԵ.40–42**

Փառքի աստիճաններ

**Ենթատեքստ**

Կորնթոսում Եկեղեցու անդամներին ուղղված մի նամակում Պողոս Առաքյալը պատասխանեց հարցերին այն մասին, թե ինչպես մեռելները հարություն կառնեն և թե ինչպիսի մարմնով նրանք հարություն կառնեն:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հարություն առած մարմինները տարբերվում են փառքով, ճիշտ ինչպես արևը, լուսինը և աստղերը տարբերվում են իրենց պայծառությամբ:

**Կիրառում**

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 76.50–70 : Ի՞նչ պետք է անեք դուք, որպեսզի ժառանգեք սելեստիալ փառքի հարություն առած մարմին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Գաղատացիս Ե.22–23**

Հոգու պտուղը

**Ենթատեքստ**

Գաղատիայի Սրբերին ուղղված մի նամակում Պողոս Առաքյալն ուսուցանեց այն հատկանիշների մասին, որոնք Սուրբ Հոգին պատվաստում է նրանց մեջ, ովքեր ձգտում են «քայլել Հոգով»:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Սուրբ Հոգին ունենալը հաճախ առաջացնում է սիրո, ուրախության, խաղաղության, երկայնամտության, մեղմության, բարության, հավատքի, հեզության և ժուժկալության զգացումներ:

**Կիրառում**

Ե՞րբ եք զգացել Հոգու պտուղները: Ի՞նչ կարող եք անել հրավիրելու համար Սուրբ Հոգու ընկերակցությունը և վայելելու Հոգու այս պտուղները ձեր կյանքում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Եփեսացիս Դ.11–14**

Առաքյալներն ու մարգարեներն օգնում են Սրբերին կատարելագործվել:

**Ենթատեքստ**

Եփեսացիներին ուղղված մի նամակում Պողոս Առաքյալն ուսուցանեց Եկեղեցու կառուցվածքի և նպատակի մասին:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Եկեղեցու կազմակերպությունը տրված է Աստծո կողմից՝ Սրբերին կատարելագործելու և դաստիարակելու և ծառայության գործն իրականացնելու համար:

**Կիրառում**

Ինչպե՞ս են Եկեղեցու ղեկավարները պահում մեզ «երերված և տատանված վարդապետության ամեն քամուց»:

Ինչպե՞ս կարող եք լավագույն ձևով ցույց տալ շնորհակալություն Եկեղեցու տեղական ղեկավարին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Փիլիպպեցիս Դ.13:**

Ես կարող եմ անել ամեն բան Քրիստոսի միջոցով:

**Ենթատեքստ**

Բանտարկված ժամանակ Պողոս Առաքյալը գրեց Փիլիպպեցի Սրբերին նրանց քաջալերելու համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հիսուս Քրիստոսը կարող է զորացնել մեզ անելու համար այն, ինչ Աստված է պահանջում:

**Կիրառում**

Գրեք ձեր օրագրում մի ժամանակահատվածի մասին, երբ Տերը ձեզ ուժ է տվել որևէ դժվարության ժամանակ:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**2 Թեսաղոնիկեցիս Բ.1–3**

Կանխագուշակված ուրացություն

**Ենթատեքստ**

Թեսաղոնիկեյի Սրբերից մի քանիսը հավատում էին, որ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը շուտով տեղի էր ունենալու: Նրանց ուղղված նամակում Պողոս Առաքյալը շտկեց նրանց թյուրըմբռնումը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Կանխագուշակվեց, որ ուրացության մի ժամանակահատված կնախորդի Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին:

**Կիրառում**

Ինչպե՞ս կպատասխանեիք մի ընկերոջ, որը հարցրել է. «Միթե՞ Քրիստոսի Եկեղեցին չի եղել երկրի վրա այն ժամանակից, երբ Նա հիմնադրեց այն: Ինչո՞ւ պետք է լինի Վերականգնում»:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏՈՒՄ

**Բ Տիմոթեոս Գ.15–17**

Սուրբ գրությունը տրված է վարդապետության, հանդիմանության և ուղղման համար:

**Ենթատեքստ**

Պողոս Առաքյալը գրեց Տիմոթեոսին և խրախուսեց նրան, երբ նա Եկեղեցու անդամների միջև մարտահրավերների էր դիմակայում:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Սուրբ գրության մեջ գտնվող ոգեշնչված վարդապետությունը, հանդիմանությունը և ուղղումը կօգնեն մեզ առաջնորդվել դեպի փրկություն:

**Կիրառում**

Երբ է սուրբ գրության ուսումնասիրությունն օգնել ձեզ հասկանալ վարդապետությունը, զգալ հանդիմանությունը կամ ստանալ ուղղում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՏՈՒՄ

**Եբրայեցիս ԺԲ.9**

Նա մեր հոգիների Հայրն է:

**Ենթատեքստ**

Պողոս Առաքյալը քաջալերեց Եկեղեցու անդամներին հավատարիմ լինել իրենց Երկնային Հորը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստված մեր հոգիների Հայրն է և մենք պետք է հնազանդ լինենք Նրան:

**Կիրառում**

Ինչպե՞ս է գիտելիքն այն մասին, որ Աստված ձեր հոգիների Հայրն է, ազդում այն բանի վրա, թե ինչպես եք նայում պատվիրաններին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՏՈՒՄ

**Հակոբոս Ա.5–6**

Եթե իմաստության պակասություն ունեք, խնդրեք Աստծուց:

**Ենթատեքստ**

Հակոբոսը գրեց Եկեղեցու անդամներին այն մասին թե ինչպես կարելի է ստանալ աստվածային առաջնորդություն:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Աստված պատրաստակամորեն տալիս է իմաստություն նրանց, ովքեր խնդրում են Նրան հավատքով:

**Կիրառում**

Երբ է Աստված առաջնորդություն տվել ձեզ ի պատասխան ձեր աղոթքների: Ի՞նչ կարող եք անել ավելի մեծ հավատքով աղոթելու համար:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՏՈՒՄ

**Հակոբոս Բ.17–18**

Հավատքն առանց գործերի մեռած է:

**Ենթատեքստ**

Հակոբոսը գրեց Եկեղեցու անդամներին ի պատասխան ոմանց, ովքեր պնդում էին, որ գործեր պետք չեն իրենց հավատքն արտահայտելու համար:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Հավատքն առանց գործերի մեռած է:

**Կիրառում**

Ե՞րբ եք տեսեք հավատքի դրսևորումը նրանց գործերում, ում ճանաչում եք: Ի՞նչ առանձնահատուկ բաներ կարող եք անել այս շաբաթ, որոնք ցույց կտան, որ դուք հավատք ունեք Հիսուս Քրիստոսի հանդեպ:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՏՈՒՄ

**Ա Պետրոս Դ.6**

Ավետարանը քարոզվում է մահացածներին:

**Ենթատեքստ**

Երբ Սրբերը Մերձավոր Արևելքում անցնում էին բազմաթիվ փորձությունների միջով, Պետրոս Առաքյալը գրեց և հավաստիացրեց նրանց, որ Հիսուս Քրիստոսը ողջերի և մեռածների Փրկիչն է և դատավորը:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Ավետարանը քարոզվում է նրանց, ովքեր մահացել են, որպեսզի նրանք ունենան նույն հնարավորությունը, ինչպես նրանք, ովքեր լսել են ավետարանի ուղերձը մահկանացու կյանքում:

**Կիրառում**

Հնարավորություններ փնտրեք կատարելու ընտանեկան պատմության հետազոտություն ձեր նախնիների համար և մասնակցեք նրանց համար տաճարային արարողություններին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՏՈՒՄ

**Հայտնություն Ի.12**

Դատվել Աստծո առջև

**Ենթատեքստ**

Երբ Հովհաննես Առաքյալը Պատմոս կղզու վրա էր, տեսիլք տեսավ բոլոր մեռելների մասին, ովքեր բերվեցին Աստծո առջև դատվելու:

**Վարդապետություն կամ սկզբունք**

Յուրաքանչյուրը կդատվի Աստծո կողմից համաձայն իր գործերի այն գրքերից, որոնք գրվել են:

**Կիրառում**

Ինչպե՞ս է իմանալը, որ դուք պիտի դատվեք համաձայն ձեր գործերի, ազդում ձեր որոշումների վրա, որոնք դուք ընդունելու եք այսօր:

## Նոր Կտակարանի ընթերցանության աղյուսակ

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մատթեոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | | | | |
| Մարկոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Ղուկաս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | | | | | | | | |
| Հովհաննես | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | | | | | | | | | | | |
| Գործք | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | | | | |
| Հռովմայեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Ա Կորնթացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Բ Կորնթացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | | | |
| Գաղատացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Եփեսացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Փիլիպպեցիս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Կողոսացիս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Ա Թեսաղոնիկեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Թեսաղոնիկեցիս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ա Տիմոթեոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Բ Տիմոթեոս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Տիտոս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ֆիլիմոն | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Եբրայեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | | | |
| Հակոբոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Ա Պետրոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Պետրոս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ա Հովհաննես | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Հովհաննես | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Գ Հովհաննես | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Հուդա | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Հայտնություն | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | | | | | | | | | | |


## Նոր Կտակարանի ընթերցանության աղյուսակ

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մատթեոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | | | | |
| Մարկոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Ղուկաս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | | | | | | | | |
| Հովհաննես | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | | | | | | | | | | | |
| Գործք | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | | | | |
| Հռովմայեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Ա Կորնթացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Բ Կորնթացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | | | |
| Գաղատացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Եփեսացիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Փիլիպպեցիս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Կողոսացիս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Ա Թեսաղոնիկեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Թեսաղոնիկեցիս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ա Տիմոթեոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | | | | | | | | | |
| Բ Տիմոթեոս | 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | |
| Տիտոս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ֆիլիմոն | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Եբրայեցիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | | | |
| Հակոբոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Ա Պետրոս | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Պետրոս | 1 | 2 | 3 | | | | | | | | | | | | | |
| Ա Հովհաննես | 1 | 2 | 3 | 4 | 5 | | | | | | | | | | | |
| Բ Հովհաննես | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Գ Հովհաննես | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Հուդա | 1 | | | | | | | | | | | | | | | |
| Հայտնություն | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | | | | | | | | | | |

19 Եւ երկրում . Արդ, գնացէք բոլոր
ազգերը աշակերտեցէք, նրանց մկրտելով
Հօր եւ Որդու եւ Սուրբ Հո-
20 գու անունով . Նրանց սովորեցնելով,
որ ամէն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն . եւ ահա ես ձեզ
հետ եմ ամէն օր մինչեւ աշխարհքի
վերջը . Ամէն .

36 տեղը . Ճշմարիտ ասում եմ ձեզ, այս
բոլորը կ՚գայ այս ազգի վերայ .
37 Երուսաղէմ Երուսաղէմ, մարգարէները կոտորող, եւ քեզ մօտ ուղարկուածները
քարկոծող . քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել, ինչպէս հաւը ժողովում է իր
ձագերը թեւերի տակը . եւ դուք
38 չ՚կամեցաք . Ահա ձեր տունն աւերուած
39 կ՚թողուի ձեզ . Որովհետեւ ասում եմ ձեզ, Դէ այսուհետեւ չէք
տեսնիլ ինձ՝ մինչեւ որ ասէք . Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը .

15 Եւ ես
նորան քո աշակերտների մօտ բերի,
16 եւ չ՚կարողացան նորան բժշկել . Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց . Ով
անհաւատ եւ խոտորեալ ազգ, մինչեւ
ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչեւ
ե՞րբ պիտի ձեզ համբերեմ . Նորան ինձ
17 մօտ բերէք այստեղ . Եւ Յիսուսը նորան սաստեց . եւ դեւը նորանից դուրս
եկաւ, եւ տղան նոյն ժամից բժշկուեցաւ .
18 Այն ժամանակ աշակերտներն առանձին Յիսուսի մօտ եկան
եւ ասեցին . Մենք ի՞նչու չ՚կարողացանք հանել նորան .
19 Յիսուսն էլ ասեց նորանց, Ձեր թերահաւատութեան
համար . որովհետեւ ճշմարիտ ասում
եմ ձեզ՝ եթէ մանանեխի հատի չափ
հաւատք ունենաք, այս սարին կ՚ասէք՝ փոխադրուիր այստեղից այնտեղ,
եւ նա կ՚փոխադրուի . եւ ոչինչ անկարելի չի լինիլ ձեզ համար .

28 Ինձ մօտ եկէք, ամէն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կ՚տամ ձեզ .
29 Ձեզ վերայ առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք . որովհետեւ ես հեզ
եմ եւ սրտով խոնարհ . եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ՚գտնէք .
30 Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ
իմ բեռը՝ թեթեւ .

14 Դուք աշխարհի լոյսն էք . մի քաղաք,
որ կենում է սարի վերայ, կարող չէ
15 թաքչուիլ . Եւ ճրագը չեն վառիլ եւ
դնիլ գրուանի տակ, այլ ճրագակալի
վերայ, եւ նա լոյս կ՚տայ ամենին՝ որ
16 տան մէջ են . Այսպէս լուսաւորէ ձեր
լոյսը մարդկանց առաջին, որ ձեր
բարի գործերը տեսնեն, եւ փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է .

3 Եւ սա է
յաւիտենական կեանքը, որ ճանաչեն
քեզ միայն ճշմարիտ Աստուած . եւ
նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին
Քրիստոսին .

15 Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք .

6 Յիսուսը նորան ասեց . Ես
եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը
եւ կեանքը . Ոչ ով չի գալիս Հօր
մօտ, եթէ ոչ ինձանով .

5 Յիսուսը պատասխանեց . Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ . Եթէ
մէկը ջրից եւ Հոգուց չ՚ծնուի, նա
կարող չէ Աստուծոյ արքայութիւնը
մտնել .

36 Եւ նորանք այս խօսելիս, Յիսուսն
ինքը կանգնեց նորանց միջումը եւ
նորանց ասեց . Խաղաղութիւն ձեզ .
37 Եւ նորանք զարհուրելով վախեցած,
համարում էին, թէ ոգի են տեսնում .
38 Եւ նորանց ասեց . Ի՞նչու էք
շփոթուած . ի՞նչու համար խորհուրդներ են վերկենում ձեր սրտերումը .
39 Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ
ես ինքս եմ . շօշափեցէք ինձ եւ տեսէք . որովհետեւ ոգին մարմին եւ
ոսկերք չ՚ունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ .

40 Կան երկնաւոր
մարմիններ էլ, երկրաւոր մարմիններ
էլ . բայց ուրիշ է երկնաւորների
փառքը, եւ ուրիշ է երկրաւորների
41 փառքը . Ուրիշ է արեգակի փառքը,
եւ ուրիշ է լուսնի փառքը, եւ ուրիշ
է աստղերի փառքը . որովհետեւ մի
աստղ միւսից զանազանվում է փառ-
42 քով . Այնպէս էլ մեռելների յարութիւնը . սերմվում է ապականութիւնով, եւ յարութիւն է առնում անապականութիւնով .

20 զօրմելի ենք . Բայց հիմա Քրիստոսը
յարութիւն է առել մեռելներից, ինքը
21 ննջածների առաջինեկ եղաւ . Որեւմն
որովհետեւ մարդով եղաւ մահը, եւ
մարդով էլ մեռելների յարութիւնը .
22 Քանզի ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են .

19 Կամ
թէ չ՚գիտէ՞ք, որ ձեր մարմինները
Սուրբ Հոգու տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստուածանից ու-
20 նիք . Եւ ձերինը չէք . Որովհետեւ մեծ
գնով գնուեցաք . ուստի փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնումը եւ
ձեր հոգումն՝ որ Աստուծունն են .

19 Ուրեմն զղջացէք եւ ետ դարձէք, որ
20 ձեր մեղքերը ջնջուին . Որ Տիրոջ երեսից հանգստանալու ժամանակները
գան . եւ նա ուղարկէ առաջուց ձեզ
համար քարոզուած Յիսուս Քրիստո-
21 սին . Որին երկինքը պէտք է ընդունի, մինչեւ այն ամէն բաների հաստատուելու ժամանակները, որոնց
համար խօսեց Աստուած իր բոլոր
սուրբ մարգարէների բերանովը յաւիտենից հետէ .

36 Հիմա թող ստոյգ
գիտենայ Իսրայէլի բոլոր տունը, որ
Աստուած նորան Տէր եւ Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք
խաչեցիք .
37 Եւ երբոր այս լսեցին, նրանց սրտերումը զղջացին . եւ ասեցին Պետրոսին եւ միւս առաքեալներին, Ի՞նչ
38 անենք, մարդիկ եղբարք . Պետրոսն
էլ նորանց ասեց . Ապաշխարհեցէք՝
եւ ձեզանից ամէն մէկը թող մկրտուի
Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի
թողութեան համար, եւ Սուրբ Հոգու
պարգեւը կ՚ընդունիք .

15 Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը
գիտես, որ կարող են քեզ իմաստուն
անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն
16 է . Ամէն Գիրք աստուածաշունչ են
եւ օգտակար, վարդապետութեան,
եւ յանդիմանութեան, եւ ուղղելու,
եւ արդարութեան խրատելու համար .
17 Որ Աստուծոյ մարդը կատարեալ լինի
ամէն բարի գործերի համար պատրաստուած .

1 Աղաչում ենք ձեզ, եղբարք, մեր
Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան
եւ մեր նորա մօտ ժողովուելու հա-
2 մար . Որ դուք շուտով չ՚շարժուիք
ձեր մտքիցը եւ չ՚զարհուրիք ոչ հոգով,
եւ ոչ խօսքով, եւ ոչ թղթով իբր թէ
մեզանից գրուած, որպէս թէ Քրիստո-
3 սի օրն եկած հասած լինի . Մէկը
չ՚խաբէ ձեզ ոչ մի կերպով . որովհետեւ նա չի գալ եթէ առաջ չ՚գայ
ապստամբութիւնը, եւ յայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստի որդին,

13 Ամէն բան
կարող եմ ինձ զօրացնող Քրիստոսով .

11 Եւ նա մի քանիսին տուաւ առաքեալներ լինելու, մի քանիսին մարգարէներ, մի քանիսին աւետարանիչներ, մի քանիսին հովիւներ եւ վար-
12 դապետներ, Սուրբերի կատարելութեանը համար, պաշտօնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինութեան
13 համար . Մինչեւ որ ամենքս հասնենք
հաւատքի եւ Աստուծոյ Որդին ճանաչելու միութեանը . եւ կատարեալ մարդ լինելու Քրիստոսի կատար-
14 եալ հասակի չափովը . Որ այլ եւս
երեխայ չ՚լինենք երերուած ու տատանուած վարդապետութեան ամեն
հողմուցը մարդկանց խաբեբայութիւնովը որ մոլորեցնեն խաբեբայութեան
15 խորամանկութիւնովը .

22 Բայց Հոգու պտուղն է՝ սէր,
ուրախութիւն, խաղաղութիւն, եր-
23 կայնմտութիւն, Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն,
ժուժկալութիւն . այնպիսիների դէմ
օրէնք չ՚կայ .

12 Եւ տեսայ մեռելները մեծ եւ փոքր
կանգնած աթոռի առաջին. Եւ գրքեր
բացուեցան, Եւ մի ուրիշ գիրք էլ
բացուեցաւ, որ է կեանքի գիրքը, եւ
մեռելները դատուեցան այն գրքերում
գրուածներից՝ իրանց գործերի հա-
մեմատ։

6 Որով-
հետեւ խսկ սորա համար մեռելներին
էլ աւետարանուեցաւ, որ մարդի կող-
մանէ մարմնով դատուին, բայց կեն-
դանի լինեն Աստուծոյ կողմանէ հոգով։

17 Այսպէս էլ հա-
ւատքը, եթէ գործ չ'ունենայ, ըստ
18 ինքեան մեռած է։ Բայց մէկը կ'ասէ
թէ Դու հաւատք ունիս, եւ ես գործ
ունիմ. ցոյց տուր ինձ քո հաւատքը
*գործերից, եւ ես էլ ցոյց կ'տամ
քեզ իմ հաւատքն իմ գործերիցը։

5 Բայց եթէ մէկը ձեզանից իմաս-
տութեան պակասութիւն ունի, թող
խնդրէ Աստուածանից, որ ամենին
տալիս է առատութեամբ եւ չէ նա-
6 խատում, եւ կ'տրուի նորան։
Թէ թող հաւատքով խնդրէ առանց
երկմտելու, որովհետեւ երկմտողը
նման է ծովի հողմակոծուած եւ տա-
տանուած ալիքին։

9 Նաեւ մենք մեր մարմնաւոր հայրերը
խրատող ունենալով նորանցից ամաչում
էինք. Իսկ չէ՞ որ առաւել եւս պիտի
հնազանդինք հոգիների Հօրը, եւ ապ-
րենք։

## Սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության աղյուսակ

| Հունվ | Փետ | Մարտ | Ապր | Մայ | Հուն | Հուլ | Օգոս | Սեպտ | Հոկտ | Նոյ | Դեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| 30 |  | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 31 |  | 31 |  | 31 |  | 31 | 31 |  | 31 |  | 31 |

ARMENIAN
4 02104 80201 4
10480 201


## Սուրբ գրությունների ամենօրյա ընթերցանության աղյուսակ

| Հունվ | Փետ | Մարտ | Ապր | Մայ | Հուն | Հուլ | Օգոս | Սեպտ | Հոկտ | Նոյ | Դեկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| 30 |  | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| 31 |  | 31 |  | 31 |  | 31 | 31 |  | 31 |  | 31 |


*New Testament Scripture Mastery Cards* -ի թարգմանությունը: Armenian
© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում:
Անգլերենի հաստատումը. 06/12 Թարգմանության հաստատումը. 06/12 10480 201